Հաստատված է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից
(Արձանագրություն թիվ 10 առ 01.10.2009թ.)

ԲԵՌՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի» և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

1.2. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ Ապահովագրող) իրականացնում է բեռների ապահովագրություն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն դասով:

1.3. Պայմագիր և/կամ Վկայագիր կնքելիս Ապահովադրին տրվում է սույն պայմանների մեկ օրինակ, որը կազմում է Պայմանագրի (այսուհետ նաև Վկայագիր) անբաժանելի մասը:

1.4. Սույն պայմաններով կիրառվող հիմնական հասկացությունները

Ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) - Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված բացառությունների) ապահովագրական գումարի սահմաններում հատուցում վճարել Ապահովադրին (կամ Շահառուին), իսկ Ապահովադիրը պետք է վճարի ապահովագրության պայմանագրում հաշվարկված ապահովագրավճարը նշված չափով, կարգով և ժամկետներում:

Ապահովագրող - «Սիլ Ինշուրանս» Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ նաև Ընկերություն), որն իրականացնում է ապահովագրական գործունեություն և օրենքով նախատեսված այլ գործունեություն համաձայն լիազորված մարմնի կողմից տրված լիցենզիայի:

Ապահովադիր - օրենքով նախախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձիք, այդ թվում նաև օտարերկրյա կազմակերպություններ և քաղաքացիներ:

Շահառու - ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցումը ստանալու իրավունք ունեցող անձ:

Ապահովագրության օբյեկտ - ապահովագրման ենթակա գույքային շահերը:

Ապահովագրական ռիսկ - ապահովագրման ենթակա հնարավոր պատահար, որը կարող է տեղի ունենալ Պայմանագրի գործողության ընթացքում, որը կրում է հանկարծակի և պատահական բնույթ:

Ապահովագրական պատահար - պատահար, որի ի հայտ գալը նախատեսված է ապահովագրության պայմանագրով և այդ պատահարի տեղի ունենալու դեպքում (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված բացառությունների) Ապահովագրողը պարտավորվում է վճարել Ապահովադրին կամ Շահառուին (եթե այդպիսին նշված է պայմանագրում) ապահովագրական հատուցում (ապահովագրական գումարի սահմաններում) սույն պայմաններում և Պայմանագրում նշված կարգով:

Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում) - ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ընկերության կողմից ապահովագրության պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին (Պայմանագրում առկայության դեպքում) վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

Ապահովագրական գումար - ապահովագրության պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն չափը Պայմանագրի գործողության ժամանակահատվածի ընթացքում:

Ապահովագրավճարը - ապահովագրության համար հաշվարկված գումար, որը վճարվում է Ընկերությանը Ապահովադրի կողմից ապահովագրական պայմանագրում նշված չափով, կարգով և ժամկետներում:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Սույն պայմաններով ապահովագրման ենթակա են `

2.1.1. Փոխադրվող գույքը,

2.1.2. Բեռի տեղափոխման տրանսպորտային ծախսերը,

2.1.3. Այլ ծախսեր (բեռի արժեքի 10% (հնարավոր վճարվող տուրքերի, հարկերի և այլ նմանատիպ ծախսերի համար):

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

3.1. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել ստորև նշված պայմաններից որևէ մեկի հիման վրա.

3.1.1. «Պատասխանատվություն բոլոր ռիսկերի համար»: Սույն պայմանի համաձայն կնքվածՊայմանագրով ապահովագրական պատահար են համարվում՝

- ամբողջ բեռի կամ դրա մի մասի վնաս, ամբողջական ոչնչացում կամ կորուստ, որոնք տեղի են ունեցել ցանկացած պատճառով, բացառությամբ սույն պայմանների Բացառության բաժնի **4.1.1 - 4.1.10** կետերով նախատեսված դեպքերի;
- ընդհանուր վթարի հետևանքով առաջացած վնասները, ծախսերը և վճարները;
- բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը, որոնք կատարվել են բեռը փրկելու, ինչպես նաև վնասը նվազեցնելու և դրա մեծությունը որոշելու նպատակով, եթե վնասը փոխհատուցվում է ապահովագրության պայմաններով:

3.1.2. «Պատասխանատվություն մասնավոր վթարի համար»: Այս պայմանի հիման վրա կնքված Պայմանագրով ապահովագրական պատահար են համարվում՝

- ամբողջ բեռի կամ դրա մի մասի վնաս, ամբողջական ոչնչացում կամ կորուստ, որոնք հետևանք են հրդեհի, կայծակի, փոթորիկի և այլ տարերային աղետների, նավերի խորտակման կամ բախման, ինքնաթիռների և այլ փոխադրամիջոցների իրար բախման, կամ նրանց հարվածը անշարժ կամ լողացող առարկաների, ծանծաղուտի մեջ նավի խրվելու, կամուրջների փլուզման, պայթյունի, նավերի սառույցից վնասման, նավից դուրս եղած ջրի թրջելը, ինչպես նաև բեռը փրկելու և հրդեհը մարելու համար ձեռնարկած միջոցառումները;
- նավի, ինքնաթիռի կամ այլ փոխադրամիջոցի անհետանալու հետևանքով բեռի կորուստ;
- բեռի բեռնման, դասավորման, բեռնաթափման և նավի վառելիք ընդունելու հետևանքով ամբողջ բեռի կամ դրա մի մասի վնաս, ամբողջական ոչնչացում կամ կորուստ;
- ընդհանուր վթարով պայմանավորված վնասները, ծախսերը և վճարները;
- բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը, որոնք կատարվել են բեռը փրկելու, ինչպես նաև վնասը նվազեցնելու և դրա մեծությունը որոշելու նպատակով, եթե վնասը փոխհատուցվում է ապահովագրության պայմաններով:

3.2.3. «Պատասխանատվություն բացառությամբ մասնավոր վթարը»: Այս պայմանի հիման վրա կնքած Պայմանագրով ապահովագրական պատահար են համարվում՝ `

- ամբողջ բեռի կամ դրա մի մասի վնաս, ամբողջական ոչնչացում կամ կորուստ, որոնք հետևանք են հրդեհի, կայծակի, փոթորիկի և այլ տարերային աղետների, նավերի խորտակման կամ բախման, ինքնաթիռների և այլ փոխադրամիջոցների իրար բախման, կամ նրանց հարվածը անշարժ կամ լողացող առարկաների, ծանծաղուտի մեջ նավի խրվելու, կամուրջների փլուզման, պայթյունի, նավերի սառույցից վնասման, նավից դուս եղած ջրի թրջելը, ինչպես նաև բեռը փրկելու և հրդեհը մարելու համար ձեռնարկած միջոցառումները;
- նավի, ինքնաթիռի կամ այլ փոխադրամիջոցի անհետանալու հետևանքով բեռի կորուստ;
- բեռի բեռնման, դասավորման, բեռնաթափման և նավի վառելիք ընդունելու հետևանքով ամբողջ բեռի կամ դրա մի մասի վնաս, ամբողջական ոչնչացում կամ կորուստ;
- նավերի, ինքնաթիռների և այլ փոխադրամիջոցների խորտակման կամ միմյանց կամ այլ ցանկացած անշարժ կամ լողացող առարկաների (այդ թվում նաև սառույց) հետ բախման, ծանծաղուտի մեջ նավի խրվելու, նավի, ինքանաթիռի կամ այլ փոխոդրամիջոցի մեջ հրեդեհի կամ պայթյունի բռնկման հետևանքով առաջացած բեռի վնասները
- ընդհանուր վթարով պայմանավորված վնասները, ծախսերը և վճարները;
- բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը, որոնք կատարվել են բեռը փրկելու, ինչպես նաև վնասը նվազեցնելու և դրա մեծությունը որոշելու նպատակով, եթե վնասը փոխհատուցվում է ապահովագրության պայմաններով:

3.3. Լիխտերներով, բեռնանավերով և այլ նավերով բեռի փոխադրման ժամանակ Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, երբ այդպիսի նավերի օգտագործումը տեղական պայմանների համար արտասովոր չի համարվում:

3.4. Ներկա պայմանների շրջանակներում բեռնափոխադրող միջոցների անհայտ կորուստը որոշվում է հետևյալ կերպ.

- ծովային և գետային նավերի անհայտ կորուստ. նավը հանդիսանում է անհայտ կորած, եթե նորմալ պայմաններում նավի տեղափոխման համար վերջին անգամ ստացված նրա մասին

տեղեկության վայրից մինչև նշանակված նավահանգիստ հասնելու համար անհրաժեշտ տևողությունը երկու անգամ գերազանցող ժամանակահատվածում դրանից ոչ մի տեղեկություն չի ստացվել: Տևողությունը, որն անհրաժեշտ է նավը ճանաչել որպես անհայտ կորած, չի կարող դրա մասին վերջին տեղեկությունից հաշված պակաս լինել մեկ ամսից և ավել՝ երեք ամսից, պատերազմական գործողությունների պայմաններում չի կարող վեց ամսից պակաս լինել:

- օդանավերի անհայտ կորուստ. աղետի ենթարկված օդանավը, որի գտվելու վայրը /կամ դրա մնացորդների/ հայտնաբերված չէ և որի փնտրումը պաշտոնապես ավարտված է համարվում է անհայտ կորած:

- ավտոտրանսպորտային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցի անհայտ կորուստ. տրանսպորտային միջոցը համարվում է անհայտ կորած, եթե ապահովագրության պայմանագրով նշանակման վայր հասնելու օրվանից 60 օրվա ընթացքում նրա մասին ոչ մի տեղեկություն չի ստացվել:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Չեն փոխհատուցվում այն վնասները, որոնք հետևանք են՝

4.1.1. ցանկացած տիպի պատերազմական գործողությունների կամ միջոցառումների, ականների, տորպեդների (ինքնաշարժ ջրաական), ռումբերի և այլ պատերազմական հրանոթների հասցրած վնասների և ոչնչացումների, ծովահենային գործողությունների, ինչպես նաև քաղաքացիական պատերազմի, ժողովրդական հուզումների և գործադուլների, ռազմական կամ քաղաքացիական իշխանությունների պահանջով բեռների բռնագրավման, պետականացման, ձերբակալման կամ ոչնչացման,

4.1.2. ատոմային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցության, որոնք կապված են ատոմային էներգիայի ցանկացած ձևի և ճեղքելի նյութերի օգտագործման հետ,

4.1.3. Ապահովադրի կամ շահառուի կամ նրանց ներկայացուցիչների կանխամտածված գործողությունների կամ կոպիտ սխալի, ինչպես նաև նրանցից որևէ մեկի կողմից բեռների առաքման, փոխադրման, պահմանման մասին սահմանված պայմանների խախտման;

4.1.4. ջերմաստիճանի, նավամբարի օդի ազդեցության և բեռի առանձնահատկությունների, բնական հատկությունների, ներառյալ չորանվազման,

4.1.5. բեռների անհամապատասխան փաթեթավորման կամ խցանափակման և վնասված վիճակում ուղարկելու,

4.1.6. Ապահովադրի կամ շահառուի կամ նրանց ներկայացուցիչների տեղյակ լինելու դեպքում, առանց Ապահովագրողին տեղյակ պահելու այնպիսի նյութերի կամ առարկաների բեռնման ժամանակ առաջացած հրդեհի կամ պայթյունի, որոնք պայթյունի կամ ինքնայրման առումով վտանգավոր են,

4.1.7. արտաքին փաթեթավորման ամբողջականության դեպքում բեռների պակասորդի,

4.1.8. որդերի, կրծողների, միջատների կողմից բեռի վնասի,

4.1.9. բեռի անբացատրելի անհետացումը,

4.1.10. բեռները ուշ տեղ հասնելու և գների անկման, ինչպես նաև Ապահովադրի այլ անուղղակի վնասները, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրության պայմաններով այդպիսի վնասները ենթակա են հատուցման որպես ընդհանուր վթար,

4.2. Սույն պայմանների **3.2.2.** և **3.2.3.** կետերում նշված պայմաններով կնքված Պայմանագրերով բացի վերոնշյալից չեն հատուցվում բեռի վնաս կամ կորուստ, նախատեսված եկամտի կորուստ, կոմիսիոն ծախսեր, ֆրախտ և այլ ծախսեր, որոնք հետևանք են՝

4.2.1. նավի քրտնապատման և մթնոլորտային տեղումներից բեռի թրջվելու,

4.2.2. արտաքին փաթեթավորման ամբողջականության դեպքում տարայի աղտոտման կամ փչացման հետևանքով բեռի արժեզրկման,

4.2.3. տախտակամածային կամ տախտակամած չունեցող նավով փոխադրվող բեռը նավից դուրս նետելու և ալիքներից քշվելու,

4.2.4. բեռի գողության կամ չառաքման,

4.3. **Ապահովագրական պատահար չեն համարվում և հատուցման ենթակա չեն վնասները, եթե՝**

4.3.1. Լիազորված անձանց կողմից չի հաստատվել պատահարի ի հայտ գալու փաստը,

4.3.2. Ապահովագիրը խոչընդոտում է պատահարի պատճառների բացահայտմանը և վնասի չափի որոշմանը,
4.3.3. Մեղավոր կողմից ստացել է վնասի հատուցում,
4.3.4. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

5.1. Պայմանագրում յուրաքանչյուր բաժնով նախատեսված ապահովագրության օբյեկտների ապահովագրական գումարները նշվում են առանձին տողերով:
5.2. Բեռը ապահովագրվում է Ապահովադրի կողմից հայտարարված գումարով, բայց ոչ ավելի, քան մատակարարի հաշվի մեջ նշված բեռի արժեքը:
5.3. Տրանսպորտային ծախսեր բաժնում նշվում է բեռնափոխադրման համար կատարվող ծախսերի մեծությունը:
5.4. Այլ ծախսեր բաժնում (հնարավոր վճարվող տուրքերի, հարկերի և այլ նմանատիպ ծախսերի համար) ապահովագրական գումար սահմանվում է բեռի արժեքի 10% չափով կամ Պայմանագրով նախատեսված չափով:
5.5. Պայմանագրում կարող են սահմանված լինել պատասխանատվության սահմանաչափեր (օրինակ. Պատասխանատվության առավելագույն սահմանաչափ և սահմանաչափ յուրաքանչյուր փոխադրման համար):
5.6. Մեկից ավելի փոխադրումների համար ապահովագրության դեպքում յուրաքանչյուր ապահովագրական պատահարից հետո ապահովագրական գումարը նվազում է վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով: Սակայն Ապահովադրի ցանկությամբ կարող է ապահովագրական գումարը, որը չպետք է գերազանցի գույքի շուկայական արժեքը, ավելանալ Ապահովագրողի կողմից հաշվարկված լրացուցիչ ապահովագրավճարի վճարման դեպքում:
5.7. Ապահովագրավճարի չափը սահմանվում է Պայմանագրով՝ Ապահովագրական գումարի նկատմամբ կիրառելով ապահովագրական սակագինը:
5.8. Ապահովագրավճարը կողմերի համաձայնությամբ կարող է վճարվել կանխիկ կամ անկանխիկ:
5.9. Ապահովագրավճարը պետք է վճարվի Պայմանագրում նշված կարգով և ժամկետներում:
5.10. Պայմանագրում նշված ապահովագրավճարի վճարման կարգը և ժամկետները խախտելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չեղյալ համարել Պայմանագիրը:
5.11. Եթե Ապահովադրին հատուցում կատարելու ժամանակ ապահովագրավճարը լրիվ վճարված չէ, ապա Ապահովագրողը հատուցվող գումարը կնվազեցնի չվճարած ապահովագրավճարի չափով:

6. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

6.1. Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ Պայմանագրում կարող է նախատեսվել չհատուցվող գումար:
6.2. Չհատուցվող գումարը Ապահովադրի մասնակցության չափն է ապահովագրական հատուցմանը:
6.3. Չհատուցվող գումարը Պայմանագրում սահմանվում է դրամական արտահայտությամբ կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ:
6.4. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական:
6.5. Պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողն ազատվում է վնասի հատուցումից, եթե վնասի մեծությունը փոքր կամ հավասար է պայմանական չհատուցվող գումարին: Եվ կհատուցվի հասցված վնասը այնպիսի համամասնությամբ, ինչպիսին է ապահովագրական գումարը և բեռի արժեքը, եթե վնասի մեծությունը գերազանցում է պայմանական չհատուցվող գումարը:
6.6. Ոչ պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց սահմանված գումարի չափով:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ապահովագրության Պայմանագրի կնքումը և գործողության ժամկետները:

7.1. Պայմանագրի կնքման հիմք կարող է ծառայել Ապահովադրի կողմից լրացրած Ապահովագրողի կողմից տրամադրած դիմում հարցաթերթիկը կամ բանավոր հայտը:

7.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, երկու օրինակից: Անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել ավել օրինակներից:

7.3. Պայմանագրին կարող է փոխարինել նաև Վկայագիրը:

7.4. Համանման պայմաններով որոշակի ժամանակահատվածում սիստեմատիկ ապահովագրվող տարբեր խմբաքանակով փոխադրվող նույնանման բեռը կողմերի փոխադարձ համաձայնությամբ ապահովագրությունը կարող է իրականացվել գլխավոր պայմանագրով:

7.5. Պայմանագրին կից կարող են թողարկվել հավելվածներ, որոնք հանդիսանում եմ Պայմանագրի անբաժանելի մասը:

7.6. Պայմանագրի և/կամ Վկայագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողը Ապահովադրի դիմումով վերջինիս կտրամադրի Պայմանագրի կրկնօրինակը:

7.7. Բեռի փոխադրման երթուղին նշվում է Պայմանագրում:

7.8. Ապահովադիրը Ապահովագրողին պետք է հայտնի ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու իրեն հայտնի հավանականության մասին:

7.9. Եթե Պայմանագրի կնքումից հետո պարզվել է, որ Ապահովադիրը սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականության որոշման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին, ապա Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագիրը ճանաչել անվավեր և կիրառել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 2-րդ կետով նախատեսված հետևանքները:

7.10. Ապահովադիրը Պայմանագիր կնքելուց պետք է Ապոհավգրողին հայտնի հետևյալ տեղեկությունները.

- բեռի ճշգրիտ անվանումը, փաթեթավորման տեսակը, բեռնարկղերի քանակը և բեռի քաշը,
- բեռնագրերի կամ այլ տրանսպորտային փոխադրման փաստաթղթերի համարները և ամսաթվերը,
- տրանսպորտային միջոցի տեսակը (ծովային փոխադրման դեպքում՝ նավի անվանումը, կառուցման տարեթիվը, նավի դրոշը և տոննաժը),
- բեռի փոխադրման միջոցը (նավամբարի մեջ կամ տախտակամածի վրա, կողահարմամբ, լիրաթմբով, լցվածքով),
- բեռի փոխադրման նշանակման վայրերը, բեռի բարձումը և բեռի վերջնակետը,
- բեռի փոխադրման ամսաթիվը,
- բեռի ապահովագրական գումարը,
- ապահովագրության պայմանները,
- Բացի այդ, Ապահովադիրը պարտավոր է հայտնել նաև իրեն հայտնի բոլոր տեղեկությունները ռիսկի աստիճանի գնահատման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին:

7.11. Պայմանագրով պատասխանատվությունը սկսվում է այն պահից, երբ բեռը վերցվում է առաքման վայրի պահեստից և շարունակվում է ողջ փոխադրման ընթացքում (ներառյալ փոխաբեռնումները, ինչպես նաև պահպանումը փոխաբեռնման կետերի պահեստներում) մինչև այն պահը, երբ բեռը հասցվում է ստացողի պահեստ կամ նշանակման կետի այլ վերջնական պահեստ, որը նշված է Պայմանագրում, բայց ոչ ավելի քան 60 օր ծովային փոխադրամիջոցից բեռը վերջնական նավահանգստում բեռնաթափելուց հետո:

7.12. Մասնավորապես, կարող է նախատեսված լինել, որ Պայմանագիրը կարող է գործել նաև բեռի պահեստում գտնվելու ժամանակ, որը դեռ չի բարձվել փոխադրամիջոց և արդեն իսկ բեռնաթափված բեռը բեռնափոխադրումից հետո նշանակման կետում:

7.13. Պայմանագրի գործողության ժամկետները որոշվում են Պայմանագրով:

7.14. **Պայմանագրի գործողությունը վաղաժամկետ կարող է դադարել**

7.14.1. Ապահովադրի նախաձեռնությամբ՝ այդ մասին **ՈՉ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 15 ՕՐ ԱՌԱՋ** ծանուցելով Ապահովագրողին: Այս դեպքում Ապահովագրողը Ապահովադրին վերադարձնում է չլրացած օրերի համար ապահովագրավճարը համաձայն հետևյալ բանաձևի.

$Ա_վ = (Ա_պ - Հ_կ)*Պ_չ/Պ-5000$ ՀՀ դրամ

$Ա_վ$ - Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճար
$Ա_պ$ - Պայմանագրով սահմանված ապահովագրավճար
$Հ_կ$ - Ապահովադրին կատարած հատուցումների գումար
$Պ_չ$ - Պայմանագրի չլրացած օրերի քանակ
Պ – Պայմանագրով սահմանված գործողության օրերի քանակը
5000 ՀՀ դրամ - գործավարման ծախսեր

7.14.2. և՝ Ապահովագրողի, և՝ Ապահովադրի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելուց եռամսյա ժամկետում: Ապահովադրի կողմից Պայմանագրի խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները:
7.14.3. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

8.1.1. Ծանոթանալ սույն պայմաններին,
8.1.2. իր ցանկությամբ ընտրել Ապահովագրողի կողմից առաջարկվող ապահովագրական ռիսկերը,
8.1.3. Պայմանագիրը կնքել ի օգուտ այլ անձի (Շահառու),
8.1.4. Պայմանագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում ստանալ Պայմանագրի կրկնօրինակ,
8.1.5. Ապահովագրության վկայագիրը փոխանցել այլ անձի՝ Պայմանագրի վրա փոխանցիչ նշում կատարելով (ԻՆԴՈՍՍՈ)՝ վկայագրին կից հավելված թողարկելով: Նման հավելվածը Ապահովագրողի համար հիմք է հանդիսանում բեռի իրավունքի փոխանցմանը այլ անձի,
8.1.6. իր և Ապահովագրողի միջև ծագած տարաձայնությունների դեպքում դիմելու Ֆինանսական համակարգի հաշտարարին «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, եթե Ապահովադիրը ֆիզիկական անձ է:

8.2. Ապահովադիրը պարտավոր է՝

8.2.1. պատշաճ կերպով կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտականությունները,
8.2.2. տեղեկացնել շահառուին, բեռի նկատմամբ շահագրգռվածություն ունեցող անձանց սույն պայմանների մասին: Նշված անձանց կողմից սույն պայմանանների չկատարումը կամ խախտումը դիտվում է որպես Ապահովադրի կողմից Պայմանագրի պայմանների չկատարում:
8.2.3. Պայմանագրում նշված կարգով և ժամկետներում վճարել ապահովագրավճարը,
8.2.4. Պայմանագրի կնքման ժամանակ հայտնել անհրաժեշտ և ստույգ տվյալներ ապահովագրվող բեռի մասին, ինչպես նաև հավանական իրադարձությունների մասին, որոնք նշանակություն ունեն ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականության որոշման համար:
8.2.5. Պայմանագիր կնքելիս Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրության օբյեկտի վերաբերյալ նույն ռիսկերից մյուս բոլոր ապահովագրական պայմանագրերի առկայության մասին,
8.2.6. անմիջապես, հենց որ նրան հայտնի դառնա, տեղեկացնել Ապահովագրողին ռիսկի բոլոր էական փոփոխությունների մասին, ինչպես օրինակ՝ բեռի ուղարկման զգալի ուշացումը, ապահովագրության պայմանագրով նախատեսված կամ սովորական ուղուց շեղումը, չվերթի ուշացումը, բեռնափոխադրման, բեռնաթափման կետերի կամ բեռի նշանակման վայրի

փոփոխությունը, այլ նավի վրա տեղափոխումը, առաքման միջոցի փոփոխությունը, բեռի թողնելը ձմեռման, ինչը նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով և այլն:

8.2.7. գողացված բեռի հայտնաբերման դեպքում Ապահովադիրը, շահառուն, անհապաղ տեղակացնել Ապահովագրողին,

8.3. Ապահովագրական պատահարի դեպքում՝

8.3.1. **ԱՆՀԱՊԱՂ**, բայց **ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 72 ԺԱՄՎԱ** ընթացքում տեղյակ պահել Ապահովագրողին պատահարի մասին,

8.3.2. կազմի պատահարի ընդհանուր նկարագրությունը

8.3.3. չպետք է ընդունի որևէ պատասխանատվություն կամ չպետք է կատարի որևէ առաջարկ, խոստում կամ վճարում, կամ կատարի իրավական որևէ ծախս առանց Ապահովագրողի հետ նախնական գրավոր համաձայնության և պետք է Ապահովագրողին տրամադրի այնպիսի օժանդակություն, որը կարող է պահանջել Ապահովագրողը

8.3.4. չպետք է գործի ի վնաս Ապահովագրողի շահերի

8.3.5. պատահարի դեպքում ողջամիտ, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասների կանխման կամ նվազեցման համար, ինչպես նաև ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը այլ կողմերի հետ հարաբերություններում

8.3.6. Ապահովադիրը պետք է լրացնի և Ապահովագրողին ուղարկի **ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՁԵՎԸ** (հայցային դիմում) հնարավորին չափ շուտ, սակայն ոչ ուշ, քան պատահարի տեղի ունենալու օրվանից **2 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ** ընթացքում: Ապահովադիրը կարող է ստանալ պահանջի ձևը Ապահովագրողից:

8.3.7. Ապահովագրողին հայտնել մեղավոր կողմից հատուցում ստանալու, ինչպես նաև երրորդ անձանց պատճառված վնասների համար իրեն ներկայացված պահանջների մասին

8.3.8. Ապահովագրողի պահանջով տալ լիազորագիր դատարանում կամ պետական այլ մարմիններում Ապահովադրի շահերի ներկայացման համար:

8.4. 8.3 կետում թվարկված ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի ՄԵՐԺԵԼՈՒ հայցի պահանջը:

8.5. Ապահովագրողն իրավունք ունի՝

8.5.1. զննել, գնահատել ապահովագրվող օբյեկտը

8.5.2. զննել, գնահատել ապահովագրված օբյեկտին հասցված վնասը

8.5.3. անձամբ հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ ներգրավելու այլ անձանց

8.5.4. Պայմանագրին կից հավելվածներ կնքելիս, անհրաժեշտության դեպքում, Ապահովադրից պահանջել լրացուցիչ ապահովագրավճար հավելվածում հաշվարկված գումարի չափով

8.5.5. Ապահովադրի կողմից Պայմանագրի խախտման դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին սույն պայմաններով սահմանված կարգով հայտնելով Ապահովադրին

8.5.6. Պայմանագիրը չեղյալ համարել, եթե Պայմանագրի կնքումից հետո պարզվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին ի սկզբանե հայտնել է սխալ տեղեկություններ կապված իրեն հայտնի հանգամանքների մասին, որոնք ունեն զգալի նշանակություն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրանից առաջացած վնասների չափի որոշման համար,

8.5.7. Ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացվելուց հետո պահանջելու փոփոխել Պայմանագրի պայմանները կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:

8.5.8. մերժել Պայմանագրի կնքման ժամանակ արդեն առկա վնասվածքների հետևանքով առաջացած վնասների հայցը

8.5.9. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ:

8.6. Ապահովագրողը պարտավոր է՝

8.6.1. Ապահովադրին ծանոթացնել ապահովագրության պայմաններին,

8.6.2. Պայմանագրի կնքման ժամանակ Պայմանագրի և սույն պայմանների օրինակ տրամադրել Ապահովադրին,
8.6.3. Հայցի վերաբերյալ բոլոր անհարաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում հայցի կարգավորման մասին որոշում ընդունի՝ կազմելով այդ մասին համապատասխան եզրակացություն:
8.6.4. Հայցի բավարարման դեպքում ապահովագրական հատուցման վճարումը կատարել հայցի կարգավորման վերաբերյալ որոշման/եզրակացության ընդունման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում,
8.6.5. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում կայացնել պատճառաբանված որոշում և հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքել Ապահովադրին (Շահառուին) նրա մշտական բնակության հասցեով,
8.6.6. չհրապարակել Ապահովադրի մասին տվյալներ, ինչպես նաև առևտրային, բանկային և օրենսդրությամբ գաղտնի համարվող այլ տեղեկություններ, որոնք Ապահովագրողին հայտնի են դարձել իր գործունեության արդյունքում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ,
8.6.7. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

9.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչը պարտավոր են ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցառումները վնասված բեռը փրկելու և պահպանելու համար, ինչպես նաև մեղավոր կողմի նկատմամբ պահանջի իրավունք ապահովելու համար, և անմիջապես հայտնել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին տեղի ունեցածի մասին:
9.2. Ապահովագրողը կամ նրա ներկայցուցիչներն իրավունք ունեն մասնակցելու ապահովագրված բեռի փրկմանը և պահպանմանը՝ ձեռնարկելով պահանջվող միջոցառումները: Սակայն Ապահովագրողի և նրա ներկայացուցիչների գործողությունները, կապված բեռը փրկելու և պահպանելու հետ, հիմք չեն հանդիսանում Ապահովադրի՝ ապահովագրական հատուցում ստանալու իրավունքի ընդունման համար:
9.3. Բեռի փրկման և պահպանման, ինչպես նաև դրա հետագա վնասների կանխարգելման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Ապահովադրի կողմից, եթե գրավոր այլ համաձայնություն չկա Ապահովադրի և Ապահովագրողի միջև: Եթե այդպիսի ծախսերը ապահովագրության պայմանների համաձայն ենթակա են հատուցման, վնասի հաշվարկման ժամանակ Ապահովագրողի կողմից վճարվում են Ապահովադրին:
9.4. Ապահովագրական հատուցում պահանջելու դեպքում Ապահովադիրը կամ շահառուն պարտավոր են փաստաթղթորեն ապացուցել՝ իր շահը ապահովագրված բեռի նկատմամբ, ապահովագրական պատահարի առկայությունը, վնասի չափը համաձայն իր հայցի:
Հիմնական փաստաթղթեր են համարվում՝
- բեռի ապահովագրության դեպքում շահի ապացուցման համար՝ ծովային ու երկաթուղային բեռնագրեր, և այլ փոխադրման հետ կապված փաստաթղթեր (տրանսպորտային փաստաթղթեր), ապրանքագրեր և հաշիվներ, եթե այդ փաստաթղթերի համաձայն Ապահովադիրը բեռների տիրապետման իրավունք ունի, ֆրախտի ապահովագրության դեպքում՝ նավավարձագրեր և ծովային բեռնագրեր;
- ապահովագրական պատահարի առկայության ապացուցման համար՝ ծովային բողոքագիր, քաղվածք դատական մատյանից և այլ պաշտոնական ակտեր ապահովագրական պատահարի պատճառների նշումով, նավի անհայտ կորստի դեպքում՝ հավաստի տեղեկություններ նավի նավահանգստից դուրս գալու ժամանակի մասին, ինչպես նաև դրա՝ նշանակման վայր ժամանակին չժամանելու մասին, որը սահմանված է նավն անհայտ կորած ընդունելու համար;
- վնասի չափի ապացուցման համար՝ բեռի զննման ակտերը վթարային կոմիսարի կողմից, փորձագիտության, գնահատման ակտերը և այլ նմանատիպ փատաթղթեր՝ կազմված համաձայն այն տեղամասի օրենսդրության և սովորույթների, որտեղ որոշվում է վնասի չափը, կատարված ծախսերի արդարացիությունը հավաստող փաստաթղթեր, վնասի հաշիվներ, իսկ ընդհանուր վթարի ժամանակ

առաջացած վնասների, կատարված ծախսերի և վճարների հատուցման պահանջի դեպքում՝ փաստաթղթորեն հիմնավորված հաշվարկ կամ դիսպաշա:

9.5. Ապահովագրողին ապահովագրական հատուցման վճարման հայց ներկայացնելու իրավունքը մարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետը լրանալուն պես:

9.6. Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը, կամ նրա ներկայացուցիչը՝

- հայտնել է սխալ տեղեկություններ այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար, իսկ նախնական ապահովագրության պայմանագրի կնքման դեպքում՝ չի ներկայացրել անհրաժեշտ տվյալներ (7.11),
- չի հայտնել Ապահովագրողին ռիսկի էական փոփոխությունների մասին (8.2.6, 8.4.7.),
- չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ բեռը փրկելու և պահպանելու համար և չի հայտնել Ապահովագրողին և նրա ներկայացուցչին ապահովագրական պատահարի մասին (8.3.2. և 8.3.6.):

9.7. Ապահովագրական հատուցում պահանջելիս՝ Ապահովադիրը կամ Շահառուն պետք է ներկայացնի Պայմանագիրը:

9.8. Եթե Ապահովադիրը կամ շահառուն վնասի դիմաց ստացել է հատուցում երրորդ անձանցից, Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմաններով վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված գումարի միջև տարբերությունը:

9.9. Ապահովագրական հատուցման վճարումից հետո վճարված գումարի սահմաններում Ապահովագրողին են անցնում Ապահովադրի կամ շահառուի՝ երրորդ անձանց նկատմամբ ունեցած բոլոր պահանջները և իրավունքները:

9.10. Ապահովագրական հատուցում ստանալու դեպքում Ապահովադիրը կամ շահառուն պարտավոր են Ապահովագրողին փոխանցել իրենց մոտ առկա բոլոր փաստաթղթերն ու ապացույցները և իրականացնել բոլոր պաշտոնական միջոցառումները, որոնք անհրաժեշտ են սուբրոգացիայի իրավունքի իրականացման համար:

9.11. Եթե Ապահովադիրը կամ շահառուն հրաժարվեն այդպիսի իրավունքներից կամ սուբրոգացիայի իրավունքի իրականացումն իրենց մեղքով դառնա անհնար (վնասի համար մեղավոր անձանց պահանջները ներկայացման ժամկետների լրանալը), ապա Ապահովագրողը համապատասխան գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ արդեն իսկ վճարված հատուցման դեպքում Ապահովադիրը կամ շահառուն պարտավոր են Ապահովագրողին վերադարձնել ստացած հատուցումը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՈՒՄԸ

10.1. Վնասի չափը որոշվում է Ապահովագրողի ներկայացուցչի կողմից Ապահովադրի մասնակցությամբ: Տարաձայնությունների դեպքում կողմերից յուրաքանչյուրը կարող է պահանջել, որպեսզի վնասի չափի որոշումը կատարվի փորձագիտության միջոցով:

10.1.1. Եթե Պայմանագրով բեռն ապահովագրվել է ոչ լրիվ արժեքով, ապա հատուցումը կազմում է վնասի մեծությունը այնպիսի համամասնությամբ, ինչպիսին է ապահովագրական գումարի և բեռի արժեքի հարաբերությունը՝ նվազեցրած ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով, եթե այդպիսին նախատեսված է Պայմանագրով՝

$$Հ = ՎՄ \times \frac{ԱԳ}{ԲԱ} - ՉԳ$$

որտեղ,

Հ - Հատուցում
ՎՄ – վնասի մեծություն
ԱԳ - ապահովագրական գումար
ԲԱ - բեռի արժեքը
ՉԳ - ոչ պայմանական չհատուցվող գումար

10.2. Բեռի լրիվ արժեքով ապահովագրման դեպքում բեռի կորստի, ոչնչացման, վնասի դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի չափով, ապահովագրական գումարի սահմաններում: Ակնկալվող եկամտի կորստի, կոմիսիոն ծախսերի, ֆրախտի և այլ ծախսերի ռիսկը (որը բեռների ապահովագրության պայմանագրում նշվում է բեռի արժեքի 10%-չափով) կապված բեռի փոխադրման հետ վճարվում են վնասի չափի և բեռի արժեքի հարաբերակցությամբ:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալուց **ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ** (լիազորված վարորդը, Շահառուն) պետք է **ԱՆՀԱՊԱՂ,** սակայն **ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 72 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** տեղյակ պահի Ապահովագրողին:

11.2. Պատահարի ի հայտ գալու օրվանից **2 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** Ապահովադիրը պետք է ներկայացնի հայցային դիմումը:

11.3. Ապահովագրական հայցին կից ներկայացվող հիմնական փաստաթղթերն են՝

- Պետական իրավասու մարմնի կողմից տրված դեպքի մասին արձանագրությունը/եզրակացությունը/տեղեկանքը (առկայության դեպքում),
- Վնասի չափը հավաստող փորձագետի եզրակացությունը (առկայության դեպքում),
- ՀՀ Օրենսդրությամբ նախատեսված և Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:

11.4. Ապահովադրի կողմից ներկայացրած յուրաքանչյուր հայցին կից ներկայացվող փաստաթղթի վրա Ապահովագրողը գրառում է կատարում ստացման ամսաթվի մասին:

11.5. Ապահովագրողին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրվանից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Ապահովագրողը որոշում է ընդունում հայցի պահանջի բավարարման կամ մերժման մասին:

11.6. Հայցի պահանջի բավարարման դեպքում Հատուցման վճարումը կատարվում է հայցի կարգավորման վերաբերյալ որոշման ընդունման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

11.7. Հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին) Պայմանագրում նշված հասցեով:

12. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1. Պայմանագրում փոփոխություններ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

12.2. Պայմանագրից և սույն Պայմաններից ծագող բոլոր տարաձայնությունները ենթակա են լուծման Պայմանագրում նշված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.3. Սույն ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ: